

Ձեռնարկությունների Եվրոպական Ցանց Հայաստան



ՏԵՂԵԿԱԹԵՐԸ #09

Սեպտեմբեր 2018

Երևան, Հայաստան



Բովանդակություն

Գործարար համագործակցության առաջարկներ և հարցումներ.....	3
Մենդի վերամշակում.....	3
Տեքստիլ արտադրություն	6
Շինարարություն	8
R&D	11
Տեղեկատվական տեխնոլոգիաներ	12
Կոսմետիկա.....	14
Առողջապահություն	15
Այլ ոլորտներ	17
Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ և առաջարկներ.	20
Եվրոպական նորություններ և միջոցառումներ.....	23

Գործարար համագործակցության առաջարկներ և հարցումներ

Հայաստանյան ՓՄՁ-ների միջազգային գործարարության զարգացման և արտասահմանյան գործընկերների հետ կապեր հաստատելու նպատակով ՁԵՅ Հայաստանը ուշադրությանն է ներկայացնում գործարար համագործակցության հետևյալ առաջարկները.

Մանդի վերամշակում



Գործարար համագործակցության առաջարկներ

Ռումինական ընկերությունը փնտրում է գործընկերներ

Ռումինական ընկերությունը, որն արտադրում է բարձրորակ, սառը գտում անցած ընկույզի յուղ, փնտրում է բիզնես գործընկերներ:

Ծածկագիր. BORO20170130001

Մանդի վերամշակման ոլորտում գործող ընկերությունը փնտրում է գործընկերներ՝ առևտրային կամ տարածման համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով

Գերմանական ընկերությունը սննդի վերամշակման ոլորտից, որը կենտրոնացած է մասնավոր պիտակով հաճախորդների հետ համագործակցության ոլորտում, փնտրում է գործընկերներ առևտրային գործակալության կամ տարածման ծառայությունների համաձայնագրերի ներքո: Ընկերությունը կենտրոնացած է տարաներով պրեմիում դասի բարձրորակ ապուրների և ապխտած պատրաստուկների, պատրաստի կամ սառեցված կերակուրների, ինչպես նաև՝ ապակե տարաներում պրեմիում դասի սոուսների արտադրության ոլորտում:

Ծածկագիր. BODE20180417002

Մանդային հավելումներ մշակող և արտադրող իսրայելական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ

Իսրայելական ՓՄՁ-ն մասնագիտացած է միջազգային բարձր ստանդարտներով սննդային հավելումների, վիտամինների, միներալների (և այլն) մշակման և արտադրության ոլորտում:

Առավելությունները ներառում են ընկերության կողմից մշակված բուսական փափուկ գելային պարկուճների օգտագործումը, որոնք թույլ են տալիս ներթափանցել հեղուկ կամ կիսով չափ հեղուկ նյութերի մեջ, զարգացած նորարարական արտադրանքը, մուլտիվիտամինային ծամոնը, որը կարող է պարունակել ակտիվ բաղադրիչների բարձր դոզաներ: Ընկերությունը փնտրում է տարածման կամ արտադրական համաձայնագրեր:

Ծածկագիր. BOIL20180813002

Ֆիննական ընկերությունը, որն արտադրում է բարձրորակ կտավատի սերմեր, փնտրում է գործընկերներ

Ֆիննական ընկերությունը, որն արտադրում է գերազանց սննդային և ֆունկցիոնալ օգուտներ ունեցող կտավատի սերմեր, փնտրում է ընկերություններ, որոնք իրենց արտադրանքում կօգտագործեն կտավատի սերմ: Կտավատի սերմերը կարող են կիրառվել սովորական հաց թխելիս (օրինակ՝ հաց, մաֆֆին, կարկանդակ), ինչպես նաև՝ ավելի երկար պահպանման ժամկետ ունեցող արտադրանքի մեջ, ինչպես օրինակ՝ հացահատիկային փաթիլները, թխվածքաբլիթները, մակարոնեղենը և այլն: Ընկերությունը փնտրում է գործընկերներ տարածման ծառայությունների համաձայնագրի ներքո:

Ծածկագիր. BOFI20170216002

Լեհական ընկերությունը, որն արտադրում է տարբեր տեսակի սննդային հավելումներ, փնտրում է օտարերկրյա դիստրիբյուտորներ

Լեհական ընկերությունը, որը մասնագիտացած է տարբեր տեսակի բնական սննդային հավելումների ոլորտում, վաճառում է իր ապրանքատեսակները շուրջ 40 երկրներում: Ընկերությունը փնտրում է բիզնես հնարավորություններ տարածման ծառայությունների համաձայնագրերի ներքո:

Ծածկագիր. BOPL20180731002

Բելգիական ընկերությունը, որը մասնագիտացած է թանձրուկների արտադրության ոլորտում, փնտրում է դիստրիբյուտորներ

Ընկերությունը, որը հիմնված է Բելգիայում, մասնագիտացած է ավանդական և հալալ թանձրուկների արտադրության ոլորտում: Այն փնտրում է մեծածախ, մանրածախ վաճառողներ, վերավաճառողներ՝ սուպերմարկետների կամ սննդի ոլորտում (արագ սնունդ ռեստորաններ, հյուրանոցներ, հասարակական սննդի կետեր) գործող գործընկերների շրջանում, ովքեր ցանկանում են համագործակցել տարածման ծառայությունների համաձայնագրի ներքո:

Գործարար համագործակցության հարցումներ

Միացյալ Թագավորությունում գտնվող ընկերությունը փնտրում է տարածման համաձայնագրեր սննդամթերքի համար

Միացյալ Թագավորությունում հիմնված բիզնեսը, որն ունի իր սեփական պահեստային հնարավորությունները, փնտրում է սննդի և խմիչքների մատակարարներ՝ տարածման ծառայությունների համաձայնագրի ներքո համագործակցելու նպատակով: Հիմնադրված լինելով 2014 թվականին, այն մատուցում է ծառայություններ ռեստորաններին, սրճարաններին և Լոնդոնին շրջակա փոքր մանրածախ խանութներին, որոնք փնտրում են նոր սննդատեսակներ և խմիչքներ, ինչպես օրինակ՝ սուրճ, մրգային հյութեր, ոչ ալկոհոլային խմիչքներ, եգիպտացորեն, թանձրուկներ, ձիթապտղի յուղ և արևածաղկի ձեթ:

Ծածկագիր. BRUK20180629001

Ընկերությունը, որը մասնագիտացած է բուսական և մեղրի վրա հիմնված արտադրանքի ոլորտում, փնտրում է խոտաբույսեր արտերկրում

Բուսական ընկերությունը Նովգորոդի տարածաշրջանից, որը մասնագիտացած է խոտաբույսերի և մեղրի վրա հիմնված ապրանքների մշակման, արտադրության և փաթեթավորման ոլորտում, փնտրում է տարբեր խոտաբույսեր՝ տարածման ծառայությունների համաձայնագրի ներքո համագործակցելու նպատակով:

Ծածկագիր. BRRU20171214001



Գործարար համագործակցության առաջարկներ

Ընկերությունը, որը մասնագիտացած է տարբեր տեսակի պիտակների և հագուստի, տեքստիլ արդյունաբերության համար նախատեսված պարագաների արտադրության ոլորտում, փնտրում է առևտրային գործակալության և արտադրական համաձայնագրեր

Իսրայելյան ընկերությունը մասնագիտացած է տարբեր տեսակի պիտակների և հագուստի, տեքստիլ արդյունաբերության համար նախատեսված պարագաների (կախիչ, գործվածքից պիտակներ, մետաղական պիտակներ, մետաքսի տպագրությամբ պիտակներ, բար-կոդ պիտակներ և այլն) արտադրության ոլորտում: Առավելությունները շուկայում առկա նման արտադրանքի հետ հետևյալն են՝ մրցունակ գինը և բարձր որակը, նորագույն տեխնոլոգիաների և նյութերի կիրառությունը և այլն: Ընկերությունը փնտրում է առևտրային գործակալության, տարածման և արտադրական համաձայնագրեր:

Ծածկագիր. BOIL20180812001

Հագուստի ոլորտում գործող ռումինական արտադրողը փնտրում է արտադրական պայմանագրեր միջազգային գործընկերների հետ

Ռումինական ընկերությունը հարավ-արևմտյան Օլտենիայի տարածաշրջանից, գործում է տեքստիլի ոլորտում՝ իբրև հագուստ արտադրող: Ընկերությունն արտադրում է հագուստներ հաճախորդի կողմից մատակարարվող հումքից և հետաքրքրված է Եվրոպայում օտարերկրյա գործընկերների հետ համագործակցությամբ՝ արտադրական համաձայնագրի ներքո:

Ծածկագիր. BORO20180810001

Թուրքական ընկերությունը, որը զբաղվում է տեքստիլի արտադրությամբ, փնտրում է արտադրական պայմանագրեր

Փորձառու թուրքական ընկերությունը, որն արտադրում է տեքստիլ, ունի ճկուն և բարձր արտադրական կարողություններ և փնտրում է ենթակապալառուներ, ովքեր պայմանագրային

արտադրողի կարիք ունեն: Բազմապիսի արտադրական հնարավորությունները և ժամանակին արված արտադրանքն ու առաքումը ընկերության կարևորագույն առաքելություններից են: Պատվիրատու կողմը կարող է ընտրել առաքման ժամանակը, քանակությունը, գործվածքները և ապրանքի մոդելը: Ընկերությունը բաց է արտադրական և ենթապայմանագրային ծառայությունների համաձայնագրերի ներքո համագործակցությամբ ցանցի բոլոր երկրներում:

Ծածկագիր. BOTR20170112001

Մանկական ձեռագործ կաշվե կոշիկներ և կանացի դրամապանակներ արտադրող ռումինական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ

Ռումինական ընկերությունը, որը զբաղվում է կոշկեղենի ոլորտում ծառայությունների մատուցմամբ, հատկապես՝ էքսկլյուզիվ նորաձևության բրենդների համար, մշակել է իր սեփական արտադրանքը և այժմ փնտրում է դիստրիբյուտորներ՝ իր արտադրական նոր գծերի համար: Դրանք են՝ մանկական կոշիկներ և կանացի դրամապանակներ:

Ծածկագիր. BORO20170718001

Լատվիական ընկերությունը հագուստ արտադրողներին առաջարկում է ամբողջական ծառայություններ արտադրական կամ ենթապայմանագրային համաձայնագրերի ներքո

Կարի ոլորտում գործող լատվիական ընկերությունն առաջարկում է իր ծառայությունները՝ կանացի հագուստի դիզայն, ձևվում, նախօրինակ և կար, արտադրական կամ ենթապայմանագրային համաձայնագրերի ներքո:

Ծածկագիր. BOLV20170220001

Ընկերությունը Միացյալ Թագավորությունից արտադրական համաձայնագրերի ներքո արտադրում է գլխարկներ

Միացյալ Թագավորությունում գտնվող ՓՄՁ-ն, որը շուրջ 150 տարվա փորձ ունի բարձրորակ գլխարկների արտադրության ոլորտում, որոնք հարմարեցված են հաճախորդի կարիքներին, առաջարկում է իր կարողությունները գործընկերներին: Նախատեսվում է, որ համագործակցությունը կլինի արտադրական համաձայնագրերի ներքո:

Ծածկագիր. BOUK20180816004

Գործարար համագործակցության հարցումներ

Տղամարդու հագուստ արտադրող բելգիական դիզայները փնտրում է գործված գլխարկներ (beanie) և գուլպաներ արտադրողներ՝ արտադրական համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով

Տղամարդկանց հագուստ արտադրող բելգիական ընկերությունը փնտրում է տարբեր դիզայնով գործված գլխարկներ (beanie) և գուլպաներ արտադրողներ: Ընկերությունը փնտրում է փոքր ընկերություն՝ Եվրոպայում՝ երկարատև համագործակցության նպատակով:

Ծածկագիր. BRBE20180719001

Հագուստի ոլորտում գործող լիտվական ընկերությունը փնտրում է հագուստ արտադրողներ

Լիտվայում հիմնված հագուստի դիզայնով զբաղվող ընկերությունը, որը հիմնվել է 2 փորձառու դիզայներների կողմից, փնտրում է արտադրական գործընկերներ: Ընկերությունը նախագծում և արտադրում է կորպորատիվ հագուստ ծառայությունների մատուցող աշխատակիցների լայն շրջանակի համար: Ընկերությունը նաև նախագծում է լոգոներ և մատուցում է գրաֆիկական դիզայնի ծառայություններ: Ընկերությունը փնտրում է գործընկերներ արտադրական համաձայնագրերի ներքո, ով կարող է արտադրել հագուստ՝ ըստ տրված դիզայնի: Ընկերությունը որոնում է գործընկերներ ԵՄ-ում, Սկանդինավյան և ԱՊՀ երկրներում:

Ծածկագիր. BRLT20180806001

Շինարարություն



Գործարար համագործակցության առաջարկներ

Մակեդոնական դիզայներական և ճարտարապետական ստուդիան առաջարկում է

Enterprise Europe Network Armenia,
Address: 5a M. Mkrtchyan St., Yerevan 0010, Armenia
Tel.: (+374 12) 54 16 48, 56 37 14 info@eenarmenia.am; <http://eenarmenia.am/>

Ճառայությունների մատուցման և ենթապայմանագրային համագործակցություն

Մակեդոնական ընկերությունը, որը մասնագիտացած է ճարտարապետական և քաղաքային պլանավորման, շինարարության վերահսկողության և ինտերիերի, կահույքի դիզայնի ոլորտում, փնտրում է գործընկերներ, ովքեր հետաքրքրված են ճառայությունների մատուցման կամ ենթապայմանագրային համաձայնագրերով: Ընկերությունն առաջարկում է ծախսարդյունավետ, պրոֆեսիոնալ և երկարատև հուսալի ճառայություններ երկարատև ժամկետով՝ ճարտարապետության, շինարարության և դիզայնի երկարատև ոլորտի ընկերություններին:

Ծածկագիր. BOMK20180627001

Իսպանական ընկերությունը, որը զբաղվում է շինարարական ագրեգատների արդյունահանմամբ և արտադրությամբ, փնտրում է տարածման ճառայություններ

Փոքր ընկերությունը, որը գտնվում է Հարավային Իսպանիայում, զբաղվում է քարի ագրեգատների արդյունահանմամբ և ապա մշակում դրանք իր գործարանում: Դրանք բարձրորակ, CE-սերտիֆիկացված ագրեգատներ են՝ բազմազան օգտագործման համար (բետոն և հավանգ, բիտումային խառնուրդներ, հատիկավոր շերտեր և քարե լցնումներ): Ընկերությունը փնտրում է գործընկերներ, ովքեր հետաքրքրված են տարածման ճառայությունների համաձայնագրերով՝ արտադրանքը նոր շուկայում ներկայացնելու նպատակով:

Ծածկագիր. BOES20180724001

Ընկերությունը, որը նախագծում և արտադրում է ապրանքներ, որոնք նպաստում են ցածրորակ բետոնե խառնուրդի հայտնաբերմանը, փնտրում է դիստրիբյուտորներ՝ տարածման ճառայությունների համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով

Ընկերությունը Միացյալ Թագավորությունից, որը մշակում է նոր նորարարական գործիքներ սեղմման ուժի դեպքում թարմ բետոնե խառնուրդների արագ թեստավորման համար, փնտրում է դիստրիբյուտորներ:

Ծածկագիր. BOUK20180903003

Թուրքական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ

Թուրքական ընկերությունը, որը տեղակայված է Անթալիայում, արտադրում է շինարարական և արդյունաբերական ներկեր, շինարարական քիմիա, ջերմամեկուսիչ նյութեր, ածխածնի ընդլայնված պոլիստիրոլ (EPS) և սպիտակ EPS համակարգ ու պաստառներ: Իբրև լավ հայտնի բրենդ Թուրքիայում, ընկերությունը փնտրում է նոր դիստրիբյուտորներ և առևտրային գործակալներ ողջ աշխարհում՝ իր լայն տեսականին արտահանելու և իր բիզնեսը ընդլայնելու համար:

Բուլղարական արտադրողն առաջարկում է առևտրային գործակալության համաձայնագրեր

Բնակելի և թեթև առևտրային շենքերի համար նախատեսված մետաղական կոնստրուկցիաներ արտադրող բուլղարական ընկերությունը փնտրում է առևտրային գործակալության համաձայնագրեր: Ընկերությունը մասնագիտացած է տարբեր մետաղական կառուցվածքների դիզայնի, արտադրության, փոխադրման և կառուցման ոլորտում: Ընկերությունն առաջարկում է ամբողջական լուծումներ ցանկացած ծրագրի համար: Շինարարական աշխատանքներին պատրաստվելու և կառուցելու նպատակով ընկերությունն ուղարկում է իր բարձր որակավորում ունեցող մասնագետներին:

Ծածկագիր. BOBG20180612001

Մակեդոնական ընկերությունը, որն արտադրում է մետաղական կառուցվածքներ և մասեր, առաջարկում է արտադրական, աութորսինգային և ենթապայմանագրային համաձայնագրեր

Մակեդոնական ընկերությունը, որն արտադրում է մետաղական կառուցվածքներ և մասեր, առաջարկում է իրականացնել պողպատե կառուցվածքների հավաքում, մեծ արտադրական օբյեկտների վերանորոգում և մեխանիկական սպասարկում արտադրական, աութորսինգային համաձայնագրերի ներքո, այդպիսով դառնալով եվրոպական երկրներում այդ ոլորտի աշխատանքներում ենթակապալառու:

Ծածկագիր. BOMK20171227001

Գործարար համագործակցության հարցումներ

Գերմանական ընկերությունը, որը մատակարարում է հիդրավլիկ և օդաճնշական համակարգեր, փնտրում է հիդրավլիկ բալուններ արտադրող, փողրակներ հավաքող, խողովակներ կտրող ընկերություններ

Գերմանական ընտանեկան ընկերությունը, որը հանդիսանում է հիդրավլիկ և օդաճնշական համակարգերի ամբողջական տեսականու մատակարար և ծառայությունների մատուցող, ներառյալ՝ փողրակների տեխնոլոգիա, խողովակի և խողովակաշարերի կտում, խողովակաշարերի, շարժիչ բլոկի կառուցում և մոդուլների հավաքում: Ընկերությունն առաջարկում է արտադրական համաձայնագրեր՝ մատակարարելու համար հիդրավլիկ բալուններ, իրականացնելու համար փողրակների հավաքում և խողովակների կտում: Այն նաև առաջարկում է ընկերության ձեռքբերում այն ընկերություններին, որոնք մասնագիտացած են

հիդրավլիկ բալոնների, փողրակների հավաքման և խողովակների կռման ոլորտներում:

Ծածկագիր. BRDE20180808002

Լեհական ընկերությունը, որն արտադրում է հավաքովի լոգասենյակի խցիկներ, փնտրում է կցամասեր, սալիկներ և աքսեսուարներ արտադրողներ:

Լեհական ընկերությունը, որն արտադրում է հավաքովի սանհանգույցներ և լոգարանի խցիկներ, փնտրում է լոգարանի կցամասեր, պատերի և հատակի սալիկներ և լոգարանի աքսեսուարներ արտադրողներ: Ընկերությունը փնտրում է տարածման ծառայությունների համաձայնագրեր:

Ծածկագիր. BRPL20180726001

R&D




Կորեական ՓՄՁ-ն փնտրում է գիտահետազոտական գործընկերներ՝ գազի տուրբինների բարձր ջերմաստիճանի մասեր մշակելու նպատակով՝ օգտագործելով մետաղների 3D լազերային տպագրության տեխնոլոգիան PBF (Փոշու շերտերի միաձուլում) մեթոդով

Ընդհանուր համաձուլվածքներ և կցամասեր արտադրող ընկերությունը Հարավային Կորեայից մշակում է գազի տուրբինների մասեր, որոնք օգտագործվում են մետաղների 3D լազերային տպագրության տեխնոլոգիան՝ PBF բարձր ջերմաստիճանի մեթոդներ կիրառելիս: Ընկերությունը փնտրում է 3D տպագրություն կիրառող ընկերություն՝ մշակելու համար բարձր ջերմության գազի տուրբինների մասեր և EUREKA Network program ծրագրի համար 2019 թվականի մարտ ամսին համատեղ առաջարկ ներկայացնելու նպատակով: Մրցույթի վերջնաժամկետն է՝ 2019 թ. մարտի 30-ը, հետաքրքրության առաջարկները կրնդունվեն մինչև 2019 թ. փետրվարի 28-ը:

Հ2020 CE-SFS-39-2019: Հետազոտական կենտրոնը որոնում է գործընկերներ վերամշակման տեխնոլոգիաների տարբեր պրոֆիլների համար՝ դիժեստիվը հարմար պարարտանյութի կամ հողի լուծիչի վերածելու նպատակով

Իսպանական հետազոտական կենտրոնը, որը լավ փորձ ունի արդյունաբերական միջավայրի ոլորտում, պատրաստում է առաջարկ՝ “CE-SFS-39-2019 թեմայի շրջանակներում, “բարձրորակ օրգանական պարարտանյութեր կենսագազի դիժեստիվից” թեմայի ներքո: Ծրագրի նպատակն է մշակել և վավերացնել նոր գործընթացը՝ բույսերի կենսագազից ստացվող դիժեստիվը վերածել տարբեր պարարտանյութերի՝ նրանց մուտքը առավել դյուրին դարձնելու նպատակով: Կենտրոնը փնտրում է գյուղմթերքի արտադրողներ և ֆերմերներ, տեխնոլոգիայի մատակարարներ և հետազոտական կենտրոններ, վերջնական սպառողներ և պետական կառավարման մարմիններ՝ այդ ծրագրին մասնակցելու նպատակով:

Տեղեկատվական տեխնոլոգիաներ



Գործարար համագործակցության առաջարկներ

Գերմանական ընկերությունը, որը մշակում է ծրագրեր և ծառայությունների հավելվածներ, փնտրում է համատեղ ձեռնարկություն, ծառայությունների մատուցման կամ ենթապայմանագրային համագործակցություն:

Սմարթ տեղեկատվական մենեջմենթի ծրագիր մշակած գերմանական ընկերությունը առաջարկում է արդյունավետ ծրագրային լուծումների իր պորտֆելը՝ համատեղ ձեռնարկության կամ ենթապայմանագրային համագործակցության ներքո համագործակցելու:

նպատակով:

Ծածկագիր. BODE20180907001

Քաթարում գործող ծրագրային հարթակ մշակող ընկերությունը փնտրում է առևտրային գործակալներ և դիստրիբյուտորներ

Ընկերությունը Քաթարից արաբական աշխատաշուկայում առաջատարներից է և ճանաչված է հաճախորդների, պետական մարմինների և այլ իրավաբանական անձանց կողմից, մեծ ձեռնարկություններին բիզնես և տեխնոլոգիական լուծումներ տրամադրելու ոլորտում, որոնք օգնում են նրանց թվային ծառայությունների տեղաշարժին: Արդյունքները հիմնականում բարելավում են հաճախորդների փորձը և բարձրացնում գործառնական արդյունավետությունը: Ընկերությունը փնտրում է առևտրային գործակալներ և դիստրիբյուտորներ՝ իր ծառայությունների համար նոր շուկաներ գտնելու նպատակով:

Ծածկագիր. BOQA20180816001

Փաստաթղթային անվտանգության լուծումներ՝ մշակող ընկերությունը փնտրում է օտարերկրյա դիստրիբյուտորներ իրենց լուծումների համար՝ տարածման ծառայությունների համաձայնագրի ներքո համագործակցելու նպատակով

Փաստաթղթային անվտանգության լուծումներ՝ մշակող կորեական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ իրենց լուծումների համար՝ ծառայությունների մատուցման կամ տարածման ծառայությունների համաձայնագրի ներքո համագործակցելու նպատակով:

Վերահսկելով սենսորային ներկառուցված տպիչը, ընկերությունը կանխում է տվյալների արտահոսքը, որը տեղի է ունենում գրասենյակից հանված պատճենված թղթի վրա: Այս տպիչը աշխատում է միայն անվտանգության փաստաթղթերի հետ, որոնք տրվում են տպիչի հետ որպես հավաքածու, և գաղտնի տեղեկատվություն պարունակող փաստաթղթերը հայտնաբերվում են անվտանգության դարպասների մոտ, երբ փորձ է արվում դրանք դուրս բերել գրասենյակի տարածքից:

Ծածկագիր. BOKR20180815001

Գործարար համագործակցության հարցումներ

Հիշողության կամ տեխնոլոգիաների կիրառման հետ խնդիրներ ունեցող մարդկանց համար պլանշետային սարքավորումներ նախագծող Միացյալ Թագավորությունից ընկերությունը փնտրում է արտադրական համաձայնագրեր

Ընկերությունը Միացյալ Թագավորությունից շուրջ 7 տարի նախագծում և մատակարարում է սմարթ պլանշետներ, որոնք հաջողությամբ աջակցում են մեծահասակների և ժամանակակից տեխնոլոգիաները կիրառելիս դժվարություններ ունեցող մարդկանց խնամքին և մոնիթորինգին: Մրցանակակիր ծրագիրը և սարքավորումը մշտապես մշակվում է ընկերության կողմից՝ օգտատերերին առավել լավ արտադրանք տրամադրելու և առավել մեծ շուկաներ մուտք գործելու նպատակով: Այժմ ընկերությունը փնտրում է հարմար գործընկեր արտերկրում, որոնք կմատակարարեն որակյալ պլանշետներ երկարատև ժամկետով արտադրական համաձայնագրերի ներքո:

Ծածկագիր. BRUK20180824001

Կոսմետիկա



Գործարար համագործակցության առաջարկներ

Նորածինների և երեխաների համար կոսմետիկ միջոցներ արտադրողն առաջարկում է իր ապրանքները

Լեհական ընկերությունը, որն արտադրում է բնական կոսմետիկա նորածինների և երեխաների համար, շուրջ 70 տարի շուկայում է և այժմ փնտրում է դիստրիբյուտորներ: Այն մի քանի սերնդով աշխատող ընտանեկան ընկերություն է, ով հաստատուն դիրքորոշում ունի իր ընտրած ոլորտում:

Կոսմետիկ կավե արտադրանքի ոլորտում գործող ընկերությունը փնտրում է գործակալներ՝ առևտրային գործակալության կամ տարածման ծառայությունների համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով

Մակեդոնական ընկերությունը, որն արտադրում է բնական կոսմետիկա, առաջարկում է կոսմետիկ կավ, որը նախատեսված է արտաքին կիրառման՝ դեմքի, գլխի կամ ոտքերի մաշկի բուժման համար: Ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ և առևտրային գործակալներ՝ եվրոպական շուկաներ մուտք գործելու համար:

Բրազիլական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ

Բրազիլական ընկերությունը, որը փորձառու արտադրող և արտահանող է, մասնագիտացած է մազերն ուղղող բարձրորակ բուսական կերատինե արտադրանքներում, որոնք նախատեսված են մասնագիտական օգտագործման և տնային կիրառության համար: Ընկերությունը փնտրում է գործընկերներ՝ տարածման ծառայությունների համաձայնագրի ներքո համագործակցելու նպատակով, ովքեր կառաջարկեն ընկերության արտադրանքը արաբական և եվրոպական շուկաներին:

Առողջապահություն



Գործարար համագործակցության առաջարկներ

Էնդոսկոպի համար ստերիլիզացնող սարքավորում արտադրողը փնտրում է եվրոպական գործակալներ և դիստրիբյուտորներ

1994 թ.-ին Հարավային Կորեայում հիմնադրված ընկերությունը մասնագիտացած է բժշկական գործիքների ստերիլիզացման սարքավորումների արտադրության ոլորտում: Ընկերությունը կենտրոնացած է էնդոսկոպի համար ստերիլիզացման սարքավորման ոլորտում և այժմ փնտրում է գործընկերներ, ովքեր, առևտրային գործակալության և տարածման ծառայությունների համաձայնագրերի ներքո, կարող են գովազդել, տարածել և վաճառել իր արտադրանքը եվրոպական շուկայում:

Ծածկագիր. BOKR20170522001

Բերանի խոռոչը ողողող պարագաներ արտադրողը փնտրում է դիստրիբյուտորներ

Մինգապուրյան ատամնաբուժական պարագաների ոլորտում գործող ընկերությունը փնտրում է տարածման ծառայություններ ողջ աշխարհում: Ընկերության կողմից արտադրվող ապրանքները ներառում են բերանի խոռոչը ողողող պարագաներ: Ընկերությունը Ասիայում մասնագիտացած է բերանի հիգիենայի միջոցների մատակարարմամբ:

Ծածկագիր. BOSG20180807002

Ամբուլատոր էլեկտրաթերապիայի ոլորտի արտադրողը փնտրում է դիստրիբյուտորներ

Գերմանական ընկերությունը, որն աշխատում է ամբուլատոր էլեկտրաթերապիայի և բիոլոգիական հետադարձ կապի սարքավորումների համար բարձրորակ արտադրական լուծումների մշակման ոլորտում, փնտրում է միջազգային դիստրիբյուտորներ իր նոր արտադրանքի համար, որը նախատեսված է ուղեղի վնասվածքներից հետո ձեռքի սենսորաշարժական կարողությունների վերականգնման համար:

Ծածկագիր. BODE20180719001

Գործարար համագործակցության հարցումներ

Բժշկական սարքավորումների դիստրիբյուտոր ընկերությունը փնտրում է տարածման, համատեղ ձեռնարկության կամ ֆինանսական համաձայնագրեր

Բժշկական սարքավորումների գերմանական դիստրիբյուտորը փնտրում է նոր բժշկական տեխնոլոգիական ապրանքներ ին-վիտրո, խնամքի կետ, վերքերի վերահսկում և նման բնույթի ախտորոշումների համար: Այդ սարքավորումները ընկերությունը կտարածի Գերմանիայում՝ տարածման ծառայությունների համաձայնագրերի ներքո: Ավելին, ընկերությունն առաջարկում է ֆինանսական մասնակցություն առաջադեմ գիտահետազոտական ծրագրերում, որոնք ուղղված են գերմանական շուկա և առաջարկում է համատեղ ձեռնարկություն նորարարական բժշկական տեխնոլոգիաներ արտադրողներին:

Ծածկագիր. BRDE20170307001

Այլ ոլորտներ



Business Support on Your Doorstep

Գործարար համագործակցության առաջարկներ

Լիտվական ընկերությունը, որն արտադրում է սննդի արտադրության համար նախատեսված սարքավորումներ, փնտրում է դիստրիբյուտորներ:

Լիտվական ընկերությունը, որը արտադրում է սննդի արտադրության համար նախատեսված սարքավորումներ՝ արդյունաբերական հացաբուլկեղենի փոքրի համար, առաջարկում է սերիական արտադրանք (հացը կտրելու և փաթեթավորելու հոսքագծեր, հաց կտրելու սարքավորում, սառեցնող, պարկերը կտրող և այլ սարքավորումներ), որոնք աջակցում են թխման գործընթացի ավտոմատացմանը և օպտիմալացմանը: Ընկերությունը փնտրում է հնարավորություններ՝ այլ շուկաներում վաճառքն ընդլայնելու համար և փնտրում է

երկարատև ժամկետով դիստրիբյուտոր գործընկերներ:

Ծածկագիր. BOLT20180702001

Մաքրող միջոցներ արտադրող ընկերությունը փնտրում է գործընկերներ՝ տարածման ծառայությունների ներքո համագործակցելու նպատակով

Ռուսական ընկերությունը, որը մասնագիտացած է մաքրող միջոցների արտադրության ոլորտում, որոնք նախատեսված են սննդի և յուղերի արդյունաբերական ոլորտների համար, փնտրում է գործընկերներ՝ տարածման ծառայությունների համաձայնագրի ներքո համագործակցելու նպատակով:

Ծածկագիր. BORU20170808003

Բելգիական ընկերությունը փնտրում է գործընկերներ՝ նորածինների և երեխաների համար նախատեսված նորարարական աթոռները տարածելու նպատակով:

Բելգիական ընկերությունը մշակում և շուկայահանում է նորածինների և երեխաների համար նախատեսված նորարարական աթոռները: Աթոռը կարող է օգտագործվել 4 տարբեր բարձրություններում և նախատեսված է 6 ամսականից մինչև 6 տարեկան երեխաների համար: Ընկերությունը տարածում է աթոռները Բելգիայում: Ընկերությունը ցանկանում է միջազգայնացնել իր արտադրանքը: Արտերկրում ընդլայնվելու համար այն փնտրում է գործընկերներ՝ տարածման ծառայությունների համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով:

Ծածկագիր. BOBE20180726001

Իտալական ընկերությունը, որն արտադրում է խաղալիքներ, փնտրում է դիստրիբյուտորներ և գործակալներ

Իտալական ընկերությունը, որն առաջատար ընկերություններից է խաղալիքների արտադրության ոլորտում, մասնագիտացած է խաղալիք զենքերի և աքսեսուարների բնագավառում: Այն էկոլոգիապես մաքուր արտադրանք տվող ընկերություն է և օգտագործում է 100% վերամշակվող նյութեր՝ արտադրությունից մինչև փաթեթավորում: Առաջարկվող առավելությունները.

- միջազգային շուկայում շատ լավ հաստատված դիրքերում են, և
- ընկերությունն ունի ապրանքների լայն տեսականի:

Ընկերությունը փնտրում է խաղալիքների շուկայում մեծ փորձ ունեցող գործակալներ և դիստրիբյուտորներ՝ իրենց բիզնեսի հետագա ընդլայնման համար:

Ուկրաինական ընկերությունը փնտրում է համագործակցություն՝ ֆինանսական կամ համատեղ ձեռնարկության համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով

Ուկրաինական ՓՄՁ-ն, որը մասնագիտացած է էկոլոգիապես մաքուր սարքավորման արտադրության ոլորտում, փնտրում է գործընկերներ՝ եվրոպական ստանդարտներին համապատասխան լայն մորֆոլոգիական կազմի թափոնների օգտագործման համալիր ծրագիր իրականացնելու նպատակով: Առավելությունները՝ համալիր տեխնոլոգիական և նախագծային լուծումներն են: Թիրախային գործընկերներն են՝ թափոնները ձևավորող, դիզայներական և արտադրական ընկերությունները: Ընկերությունը կհամագործակցի համատեղ ձեռնարկության և ֆինանսական համաձայնագրերի ներքո:

Ծածկագիր. BOUA20180720001

Գործարար համագործակցության հարցումներ

Ընկերությունը փնտրում է բույսերի մատակարարներ

Ռուսական ընկերությունը Նովգորոդի տարածաշրջանից, մասնագիտացած է բույսերի և մեղրի վրա հիմնված ապրանքների արտադրության ոլորտում: Ընկերությունը փնտրում է տարբեր տեսակի բույսերի մատակարարներ՝ տարածման ծառայությունների ներքո համագործակցելու նպատակով:

Ծածկագիր. BRRU20171214001

Շվեդական մանկական բրենդը փնտրում է ապակե շշերի եվրոպական արտադրող

Շվեդիայում հիմնված ընկերությունը, որն իր բրենդի ներքո մշակում է անվտանգ ապրանքատեսակներ երեխաների համար, փնտրում է ապակյա շշի արտադրողներ: Այդ շշերը պետք է պատրաստված լինեն թեթև բորոսիլիկատ ապակուց և լինեն 3 տարբեր չափերի՝ 150, 240 և 300 մլ.: Ընկերության ապրանքատեսակները պատրաստված են ընտրված լավ նյութերից և դասակարգված են որպես բարձր դասի ապրանքներ:

Ծածկագիր. BRSE20170920001


Ընկերությունը փնտրում է մետաղալարերով արված աղբի հավաքման համակարգ

Դանիական դիզայները, որը վաճառում է 3 մոդուլ ունեցող աղբահանման համակարգ՝ պատրաստված փոքր անկուններում բարակ կոված մետաղալարերից, փնտրում է արտադրող (Հարավային-) Արևելյան Եվրոպայում և Ասիայում:

Լեհական ընկերությունը փնտրում է հոտավետ մոմեր արտադրող՝ տարածման ծառայությունների համաձայնագրի ներքո:

Լեհական ՓՄՁ-ն, որը մասնագիտացած է սպառողական ապրանքների և սննդամթերքի արտադրության ոլորտում, ցանկանում է ընդլայնել իր պորտֆելը հոտավետ մոմերով: ՓՄՁ-ն ունի B2C օնլայն խանութ՝ նման ապրանքների վաճառքի համար: Ընկերությունը փնտրում է տարածման ծառայությունների համաձայնագրեր՝ հոտավետ մոմեր արտադրողների հետ:

Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ և առաջարկներ



Տեխնոլոգիական համագործակցության առաջարկներ

Լեհական ընկերությունն առաջարկում է տեխնոլոգիա, որը թույլ է տալիս մշակել որակի վերահսկողություն հեղուկի փաթեթավորման կափարիչների համար

Լեհական ընկերությունը մշակել է տեխնոլոգիա, որը հնարավորություն է տալիս վերահսկել փաթեթների կափարիչների որակը. հնարավոր է վերահսկել այնպիսի փաթեթներ, ինչպիսիք են՝ PET շշերը, ապակյա սրվակները, ամպուլաները, ապակե շշերը և այլն: Մշակված համակարգը բնութագրվում է թերությունների առավել ճշգրիտ հայտնաբերմամբ, զգալիորեն ավելի փոքր չափսերով, շարժվող մասերի պակասով, ինչը նվազեցնում է ձախողման աստիճանը և արտադրական գծի անսարքության ռիսկը: Ընկերությունը փնտրում է գործընկերներ՝ տեխնիկական աջակցությամբ առևտրային գործակալության համաձայնագրերի

ներքո համագործակցելու նպատակով:

Ծածկագիր. TOPL20170703001

Աղտոտող նյութերի արտանետումների տվյալների վավերացման առցանց գործիք

Իսպանական համալսարանը մշակել է առցանց գործիք արտանետումների տվյալների գնահատման համար, որը Եվրոպական աղտոտիչների և փոխանցման ռեգիստրի (EPRT) միջոցով հաղորդվում է տարածաշրջանային իշխանություններին: Տեխնոլոգիան հիմնված է ամեն տարի թարմացվող գույքագրման հետ համեմատության վրա, և այն թույլ է տալիս երաշխիքներով գրանցել արտանետումների տվյալները: Համալսարանը փնտրում է լիցենզային համաձայնագրեր այն ընկերությունների հետ, որոնք գործում են բնապահպանության ոլորտում և հետաքրքրված են այս գործիքով:

Ծածկագիր. TOES20170911002

Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ

Կենսազանգվածների ոլորտում գործող Շոտլանդական (Միացյալ Թագավորություն) ՓՄՁ-ն փնտրում է գործընկերներ՝ ապրանքների վավերացման և հետագա համագործակցության նպատակով

Կենսազանգվածների ոլորտում գործող ՓՄՁ-ն Միացյալ Թագավորությունից մշակել է նոր պեպտիդ հիդրոգելեր, որոնք կարող են փոփոխվել տարբեր հյուսվածքների իմիտացիայի համար և տրամադրել ծախսային առումով արդյունավետ, կենդանականից զուրկ 3D մատրիցա՝ աջակցելու համար մի շարք բջիջների կուլտուրաների ծրագրերի կիրառումը: Ընկերությունը փնտրում է գործընկերներ 3D բջիջների կուլտուրայում, փորձարկման մշակում, կոսմետիկայի/դեղագործության թեստավորում և բիոպրինինգ՝ նոր կիրառական դեպքերի ուսումնասիրությունների/գնահատման համար հետազոտական կամ սեխնիկական հնարավոր համագործակցության համաձայնագրերի ներքո:

Ծածկագիր. TRUK20180319002

**Իտալական կրեատիվ ձեռագործ լաբորատորիան, որն արտադրում է ձեռագործ զարդեր,
փնտրում է պլաստիկ նյութերի փորձագետներ**

Իտալական ձեռագործ, կրեատիվ ոլորտում գործող լաբորատորիան, որն արտադրում է ձեռագործ զարդեր վերականգնվող պոլիէթիլենային տերեֆտալատից (PET), փնտրում է տեխնիկներ և փորձագետներ պոլիէթիլենային տերեֆտալատի մշակման ոլորտից կամ պոլիէթիլենային տերեֆտալատին կառուցվածքային առումով համեմատելի պլաստիկ նյութերի ոլորտից: Լաբորատորիան փնտրում է տեխնիկական կամ ծառայությունների մատուցման համաձայնագրեր:

Ծածկագիր. TRIT20180910001

Եվրոպական նորություններ և միջոցառումներ

Ձեռնարկությունների եվրոպական ցանցի շրջանակներում կազակերպվում են բազմաթիվ միջոցառումներ, որոնք հնարավորություն են ընձեռում գործարարներին հանդիպելու հավանական գործընկերների հետ և ստանալու անհրաժեշտ տեղեկություններ՝ եվրոպական շուկա մուտք գործելու համար:

Ստորև ներկայացվում են 2018 թ. -ի հոկտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր ամսիսների ընթացքում կազակերպվող միջոցառումները:

Հոկտեմբեր

16/10/2018	<p>IoT (Internet of things) Solutions World Congress 2018 - Brokerage event</p> <p>Բոխում (Գերմանիա)</p> <p>IoTSWC18-ը կենտրոնացած կլինի 7 ոլորտների վրա՝ արտադրություն, առողջապահություն, էներգիա և սպասարկող ծառայություններ, շինարարություն և ենթակառուցվածքներ, բաց արդյունաբերություն, IOT-ի գործարկում, բլոկչեյն և արհեստական ինտելեկտ:</p> <p>http://www.b2fair.com/iot2018</p>
17/10/2018	<p>Brokerage event during Expo-Russia Armenia 2018</p> <p>Երևան (Հայաստան)</p> <p>Միջոցառման թիրախ հանդիսացող ոլորտներն են՝</p> <ul style="list-style-type: none"> • Էներգիա • Մեքենաներ, մետաղագործություն, • Սարքավորումներ • Տրանսպորտ և լոգիստիկա

	<ul style="list-style-type: none"> • Երկրաբանություն և հանքարդյունաբերություն • Շինարարություն • Քիմիական արդյունաբերություն • Հեռահաղորդակցություն • Տեղեկատվական տեխնոլոգիաներ • Նորարարություն և ներդրումներ • Բանկեր և ապահովագրական ընկերություններ • Գյուղատնտեսություն և սննդամթերք • Բժշկություն • Կրթություն: <p>http://ruitc.ru/en/</p>
21/10/2018	<p>SIAL 2018 - Meet buyers</p> <p>Փարիզ (Ֆրանսիա)</p> <p>Բոլոր տիպի սննդատեսակները՝ սկսած բաղադրիչներից, վերջացրած սարքավորումներով ու վերջնական արտադրանքով, ցուցադրված կլինեն այս ցուցահանդեսին ներկայացված 21 ոլորտներում: Միջոցառմանը կկազմակերպվեն դեմ առ դեմ հանդիպումներ գնող-արտադրողների միջև, որը հիմնված կլինի միջազգային գնորդների պահանջների վրա: Ողջ Եվրոպայի արտադրողները կգան Փարիզ ցուցադրելու իրենց արտադրանքը և ներկա լինելու նախապես պլանավորված հանդիպումներին: Այս նոր տիպի միջոցառումը Ձեռնարկությունների եվրոպական ցանցի նախաձեռնություն է, որի նպատակն է կապել սննդի ոլորտի գնորդներին և արտադրողներին:</p> <p>https://b2bsialparis2018.converve.io</p>

Նոյեմբեր

12/11/2018	<p>Healthcare Brokerage Event at MEDICA 2018</p> <p>Դյուսելդորֆ (Գերմանիա)</p> <p>Այս միջոցառման նպատակն է աջակցել ձեռնարկություններին, համալսարաններին և հետազոտական ինստիտուտներին գտնելու գործընկերներ Եվրոպայում՝ բիզնես համագործակցության, ապրանքների մշակման, արտադրության և լիցենզավորման համաձայնագրերի, համատեղ ձեռնարկության և այլ տիպի համագործակցության նպատակով:</p> <p>http://www.medica-tradefair.com/</p>
29/11/2018	<p>Matchmaking event during the International textile conference 2018</p> <p>Աախեն (Գերմանիա)</p> <p>Երկօրյա միջոցառման ընթացքում մասնակիցները հնարավորություն կունենան ծանոթանալու ոլորտի վերջին զարգացումներին՝ մասնակցելով լիազուար նիստերին, դասախոսություններին և հատուկ սիմպոզիումներին, ինչպես նաև հնարավորություն կունենան հանդիպել պոտենցիալ գործընկերներին B2B հանդիպումների ժամանակ, որոնք կազմակերպված են NRW.International GmbH-ի կողմից:</p> <p>https://additc2018.b2match.io/</p>

Դեկտեմբեր

04/12/2018	<p>Face2Face Meetings @ H2020 ICT Conference</p> <p>Ավստրիա (Վիեննա)</p> <p>Այս ցանցային միջոցառումը S2S ոլորտի ներկայացուցիչների համար եզակի հնարավորություն է: Ընկերությունների, համալսարանների և հետազոտական ինստիտուտների S2S ոլորտի ներկայացուցիչները ողջ աշխարհից հրավիրվում են մասնակցելու այս միջոցառմանը, որի ընթացքում մասնակիցները ոչ միայն կփոխանակվեն ծրագրին վերաբերող մտքերով, այլ նաև ձեռք կբերեն գործընկերներ:</p>
------------	---

	https://www.acv.at
13/12/2018	<p>BIOREGATE FORUM - one-to-one meetings</p> <p>Երկու տարին մեկ անգամ իրականացվող այս ֆորումը նվիրված է բջջային և գենային թերապիայի, ցողունային բջիջների, բիոմետրատների և հյուսվածքների ճարտարագիտության ոլորտում վերջին գիտական, տեխնոլոգիական, կլինիկական և առևտրայնացմանն ուղղված մոտեցումների լուսաբանմանը:</p> <p>http://www.bioregate.com/bioregate-forum-european-regenerative-medicine-forum-2018-edition/</p>

Վերոհիշյալ միջոցառումների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվություն ստանալու համար խնդրում ենք դիմել ՁեՑ Հայաստան:

Նշում: *Եթե Դուք փնտրում եք գործընկեր արտասահմանում կամ նոր շուկա՝ և ցանկություն ունեք ներգրավվել ցանցի տվյալների բազայում, խնդրում ենք դիմել Ձեռնարկությունների եվրոպական ցանց Հայաստան՝ համագործակցության հայտաձևեր և այլ համապատասխան տեղեկատվություն ստանալու համար:*

Հարգելի գործարար,

Գրանցվեք հետևյալ հղմամբ՝

<http://een.ec.europa.eu/tools/services/ExpressionOfInterest/Customer/Create?shid=32db25cb-726f-43b0-8b5f-7742d0935799> և ստացեք անվճար

հաղորդագրություններ Ձեր էլեկտրոնային փոստին նոր գրանցված բիզնես ստաջարկների, միջազգային միջոցառումների վերաբերյալ:

Մատուցվող բոլոր ծառայություններն ու տեղեկատվությունն անվճար են:

Այս տեղեկաթերթի մեջ տեսակետները պատկանում են հեղինակին և պարտադիր չէ, որ արտահայտեն Փոքր և միջին ձեռնարկությունների գործադիր գործակալության, Եվրոպական Հանձնաժողովի կամ այլ եվրոպական կառույցների տեսակետը: Փոքր և միջին ձեռնարկությունների գործադիր գործակալությունը, Եվրոպական Հանձնաժողովը կամ դրանց կողմից գործող որևէ անձ պատասխանատու չէ տեղեկաթերթում պարունակվող բովանդակությունն օգտագործվելու դեպքում: